

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆՏԻՊ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԲՐԴԱՆՑ ՎՐԱՅ

Տարակոյս չկայ որ Եգիպտոսի բրդանց վրայ իրենց հիմնարկութենէն սկսեալ մինչև հիմա գիտնական և հետաքրքրական անթիւ գրութիւններ հրատարակուած են, այնչափ մինչև եթէ կարենայինք զանոնք 'ի մի վայր ժողովել, իրարու վրայ դիզելով թերևս կը գերազանցէին քան զբարձրութիւն բրդանց: Բայց կը համարիմք որ կը հաճին ընթերցողք նոյն նիւթին վրայօք ոչինչ նուազ հետաքրքրական ուրիշ գրութիւն և յիշատակարան մ'ալ կարդալ, զոր հին անտիպ գաղղիացի լեզուաւ ձեռագրէ մը հանած եմք: — Հերոդոտոսայ ժամանակէն սկսեալ մինչև մեր օրերը շատ կարծիք և ենթադրութիւնք եղած են բրդանց վրայ: Եղան ոմանք որ կարծեցին թէ Մեմփիսի թագաւորները չգիտնալով մահուան գաղտնիքը, ու զած ըլլան մեծակառոյց և հաստատուն պալատներ շինել, որպէս զի ընդարձակ տեղւոյ մէջ կարենայ հոգինին դիւրութեամբ շնչել, և պահպանել իրենց գերեզմանական հանգիստը ընդդէմ աշխարհակալաց՝ մահու և աշխարհի: Այս կարծիքն կամ ենթադրութիւնն յինքեան բաւական հաւանականութիւն ունի, ինչու որ Եգիպտացիք այնպիսի ժողովուրդ մ'էին, որ բոլոր իրենց կեանքը զմահ խորհելով և մահուան զբաղելով կ'անցընէին: Բայց այս կարծեաց հակառակ ուրիշ քանի մը նիւթակրօն հնախոյզք կը հաստատեն որ բուրգերն անոր համար շինուեցան որպէս զի իբրև անտեղիտալի ամբարտակներ ըլլան ռիւմոն ըսուած հարաւային սոսկալի հովուն գէմ:

Բայց ուրիշ կարծիք և ենթադրութիւն մ'ալ կայ թերևս ոչ այնչափ ծանօթ ամենուն: Եգիպտացիք, անխոնջ վաստակաւորք, բարձրացուցին այն բուրգերն ուղելով տեական և անընդհատ աշխատութեան արդեանց անկորուստ օրինակ մը տալ աշխարհի: Ուրեմն այս բուրգերն անեղծ քարակոփ դաշինքներ են քաղաքական տրնտեսութեան և աշխարհիս օրինաց թէ՛ Պէտք է աշխատիլ: Կեցած են անոնք իբրև արձան անջնջելի քարոզելու մեզի, թէ երևեցան յաշխարհի այնպիսի աշխատասէր գործաւորք՝ որ յարատեւութեամբ ջախջախեցին լիբէական լերանց շղթաները, բարձրացուցին զանոնք դէպ յերկինք այնպիսի բարձրութեամբ՝ որ անկարելի էր առաջի ճարտարապետութեան, և յոտից մինչև ցզլուխ պատեցին մարմարեայ ծեփով այն հրաշալի մեծազանգուած քարերն: Եւ կատարեցաւ այս գործը արևադարձային երկնի մը տակ, զուրկ յանձրեոյ, քրտամբ ոռոգեալ հրատոշոր աւազի մը վրայ, ուր գործաւորք փոխանակ դրամոյ սոխով կը վարձատրուէին, վասն զի այս էր նոյն ժամանակուան երկրին դրամը: Այսպիսի մտաց աչօք դիտելով բուրգերը, մարդկութեան շատ օգտակար կը գտնեմք զանոնք, ուստի մեծապէս կ'անիրաւէր ընդդէմ իրաւանց ազգաց այն փոխարքայն կամ անգղիական ընկերութիւնն՝ եթէ քանդէր զանոնք շաքարի զտարան շինելու ընդ երկայնութիւն Նեղոսի, անիրաւութիւն՝ որ քիչ մնաց պիտի պատահէր:

Բայց դժբախտաբար այս գեղեցիկ ենթադրութեան դէմ առարկութիւն մը կը հանեն ոմանք: Կ'աւանդեն պատմագիրք, կ'ըսեն հակառակորդք, որ բուրգերն յեգիպտոս գերեալ Եբրայե-

ցիւրն շինեցին, որոնք դատաւարտեալ էին 'ի բռնաւթառակ աշխատութիւնս: Եւ որովհետեւ գերիներն չեն կրնար կամաւոր գործաւորք անուանիլ՝ ուստի վերոնշանակեալ ենթադրութեան համեմատ չեմք կրնար այդ բուրգերն իբրև օրինակ մը համարել անխոնջ աշխատութեան: Քայց այսպիսի առարկութիւն մը մեզի անհիմն կ'երևայ. վասն զի թէպէտ գերեալ երբայցեցիներն գործակից եղան այս բրգանց շինութեանը, այլ վճարքը աշխատութեան համեմատ այնպէս իրենց քիչ երեցաւ, որ առաջին առթին դէպ 'ի կարմիր ծով աճապարեցին և մէկ մ'ալ չերեցան: Գերեաց ուրիշ բան չէին կրնար յանձնել բայց եթէ քարերը կրել, կիրը մանրել, և ուրիշ ասոնց նման խոշոր աշխատութիւններ. իսկ մեծահատոր կռանիտէ քարերը յարմար կերպով հատանելը և զանոնք ըստ տեղեաց կարգելը Եգիպտացի գործաւորաց պահուած էր: Հռովմ տասուերկու հազար երբայցեիք աշխատեցան Տիտոսի ամփիթէատրոնին վրայ, բայց անշուշտ իրենք ստորին կարգի աշխատաւորք կը համարուէին: Նոյնպէս և յեգիպտոս գերին կը բերէր անհարթ քարը և արհեստաւորը կը հարթէր ու կը քանդակէր: Սակայն միոյն և միւսոյն քրտինքն հաւասարապէս կը հոսէին, անոր համար այս կերպով տրուած օրինակը շատ աւելի ազդու է:

Այս բրգանց գազաթէն՝ քառասուն դարք զմեզ կը դիտեն, կ'ըսէր Նաբոլէոն Ա. իր զինուորացը՝ Եգիպտոսի պատերազմին երկրորդ օրը, որով ըսել է թէ այս բուրգերն մեծ խրախոյս և քաջալերութիւն մ'էին երիտասարդ զօրապետին: Ասիկա պատմական պարզ դէպք մ'է անկեալ 'ի մոռացութիւն, վասն զի պատմութիւնը կը մոռանայ շատ անգամ նշանակելու այս պզտի բայց կարևոր դէպքերը: Մեծանուն անձ մը իր ճանապարհորդութիւն յիշատակարանն իր վրայ: Հետեւեցան բոլոր զօրապետներն իրենց առաջնորդին, այլ անհաւասար քայլիւք, թէպէտ չունէին արգել ըլլալու չափ մարմնոյ զիւրութիւն: Երբ հասան այն արուեստական լերան կէսը, բոլոր զօրապետներն քրտանց մէջ թաթխուած էին: Հանրապետութեան զինուորական զգեստն յետին աստիճանի ծանր էր. Սետանի և Էպիքոֆի նուրբ ասուին չէր երևեր տակաւին. բայց աստի լայն գօտիներն, ծանր փողպատներն, երկայն մա-

սելու ատեն, խօսք բացուեցաւ Եգիպտոսի բրգանց վրայ: Այն ատեն ծիծաղմբ փայլելով այն զօրաւոր կնոջ գունատեալ դիմացը վրայ, դարձաւ և ըսաւ նոյն անձին.

Գիտես բրգանց պատերազմին երկրորդ օրը:

Կը խոստովանիմ տգիտութիւնս այդ երկրորդ օրուան վրայ, պատասխանեց նոյն անձը, և ստոյգ տեղեկութիւն մը չունիմ նոյն պատմութեան անցից վրայ:

Այն ատեն օգոստափառ ութսունամեայ տիկինը պատմութիւն մը պատմեց իրեն, թոյլ տալով որ եթէ ուզէ հրատարակէ. և է այս.

Երիտասարդ և մեծափառ յաղթական բրգանց, ըսաւ Նաբոլէոնի մայրը, պատերազմին երկրորդ օրը հրաւիրեց իր զօրապետները, շրջագայութիւն մ'ը ներու նոյն կողմերը. և իրեն ընկերացողներն էին Միւրադ, Լանն, Եւգինէոս Պոհարնէ, Տըսսէ, Պոն, Ռամբօն և Տիւֆֆալկա: Այս շրջագայութիւնն թէպէտ ձիով կ'ընէին բայց արեգակը իր բոցատոշոր ճարագայթներովն կը նեղէր զիրենք: Առաջին բուրգին որ հասան, Նաբոլէոն մէկէն ձիէն վար իջաւ և յայտնեց իր ընկերացը թէ կը փափագի բրգան ինչուան դադաթը ելլալ:

Իրեն այս առաջարկութիւնը, ինչպէս յայտնի է, ընդունուեցաւ մեծախնդրութեամբ: Այն ատեն բրգանց յաղթական եռանդուն երիտասարդը տուաւ օրինակը, և ելաւ նախ քառասուն դար միանգամայն ներկայացնող յիշատակարանին վրայ: Հետեւեցան բոլոր զօրապետներն իրենց առաջնորդին, այլ անհաւասար քայլիւք, թէպէտ չունէին արգել ըլլալու չափ մարմնոյ զիւրութիւն: Երբ հասան այն արուեստական լերան կէսը, բոլոր զօրապետներն քրտանց մէջ թաթխուած էին: Հանրապետութեան զինուորական զգեստն յետին աստիճանի ծանր էր. Սետանի և Էպիքոֆի նուրբ ասուին չէր երևեր տակաւին. բայց աստի լայն գօտիներն, ծանր փողպատներն, երկայն մա-

զերն, միով բանիւ նոյն ատենուան զինուորութեան ամեն զարդերն՝ ունէին բաւական ծանրութիւն։ Զօրապետներն մէկ կողմանէ վեր կ'ելլային, և միւս կողմանէ արգել եղող զգեստուց մէկ մասն վար կը ձգէին. և երբ վերջապէս գազաթը հասան, վրանին միայն անհրաժեշտ պէտք եղած զգեստն ունէին։ Իսկ Նաբոլէոն պահեր էր ամբողջապէս իր զինուորական զգեստը։

Տեսնելու բան էր զօրապետաց ամբողջութիւնը և զարմանքը։ Ոմանք 'ի նոցանէ որ դեռ չէին ունեցեր Նաբոլէոնի վրայ այն արժանաւոր համարումը յետ առաջին պատերազմին խալիօյ և յաղթութեան Բրգանց, ճանչցան զնա և խոստովանեցան գերագոյն քան զամենայն զօրապետս. երբ տեսան որ յետ այն տաժանաւոր աշխատութեան դեռ խաղաղ կերպով կը շնչէ այն զինուորական ծանր զգեստին տակ, այնպէս իբրեւ թէ Սէն-Ֆլու շագանակի ծառի մը տակ ըլլար։ Երբ տեսան զայս, համոզուեցան որ աշխարհիս արքունական դաւազանը և թագը Նաբոլէոնի միայն կրնար վայելել։

Երբ յոգնութիւննին առին և զարմանքնին փարատեցաւ, խօսք բացին Մակեդոնացի Ալեքսանդրին վրայ։ Այն աշխարհակալը, կ'ըսէին, մեծ վրիպակ մը գործեց, որ և մեծ ազդեցութիւն ունեցաւ զինուորաց վրայ։ Ելլաւ նեայ գետոյն զով ամիսնցը քով հասնելով՝ 'ի բաց ձգեց զրահը ու սաղաւարտը և քրտնալից մարմնով ինք զինքը գետ ձգեց։ Քիչ մնաց որ յանկարծահաս հիւանդութիւն մը բառնար զիւցազին կեանքը։ Փիլիպպոս անուն բժշկին դեղովը ապրեցաւ. բայց հիւանդութեան հետեանքներն երկար ատեն մնացին, և զինուորք ասկէ առիթ առին խօսելու այն թագաւորին վրայ որ որդի Արամազդայ կը կոչուէր և մէկ լուացմամբ մահուան վտանգի մէջ կ'իյնար։ Կը յաւելուէր որ նոյն իսկ զինուորներն որ չէին որդիք Արամազդայ, գրեթէ ամենքն ալ լուացուեցան 'ի կիւտնոս և ամենեին չի վնասուեցան։

Այս պատահարէն ետքը Մակեդոնացի թագաւորը հանդերձ իր քաջութեամբը և գերմարդկային դիւցազնութեամբը զոր ցուցուց բազում պատերազմաց մէջ, ալ աւելի այն քաջամարտիկ պատերազմողաց խօսակցութեան նիւթ եղաւ։ Զինուորներն կը գանգատէին և չէին ուզեր հնազանդիլ իրեն. ուստի ստիպուեցաւ Հնդկաստանի տիրելու գեղեցիկ երազէն հրաժարիլ, և դրժբախտն Ալեքսանդր մեռաւ 'ի Բաբելոն յետին յուսահատութեամբ։ Նոյն այն ճամբուն վրայ ուսկից անցեալ ժամանակաց մեծ աշխարհակալն անցաւ, երկու հազար և երեք հարիւր տարի ետքը, քաջասիրտ և արի զինուորներ կը հետեւէին ամեն կողմ՝ նոր ժամանակաց գերագոյն աշխարհակալին՝ Նաբոլէոնի։ Երիտասարդ զօրապետն ելաւ բրգանց վրայ, և ետքը լուացուեցաւ 'ի Պուլազ գետ առանց վնասուելու, կարծես թէ ինքը եղած ըլլար դիւցազանց և կիսաստուածոց երկաթի ցեղէն, որ երբեք հարկ չէր վճարեր մարդկային բնական տկարութեանց։

Հիմա անցնիմք ամենամեծ սփինքսին։ Ասիկա գերեաց գործ չէ, այլ հիանալի աշխատութիւն մ'է հմուտ և քաջ գործաւորաց. ասիկա հին և գեղեցիկ փառք մ'է յարատե աշխատութեան։ Պարոսի քարահանքէն մարմարիոնի կտոր մ'առնուլն և ըսելն՝ Եդիցիպոս Դիք կաւ Դիւցազն, ասիկա զիւրին գործ մ'է, պարզ խաղ մ'է քանդակագործաց. բայց կռանիդէ բլուր մը 'ի սփինքս փոխել, այս է ահա զարմանալին։ Այդ բլուրը կղզւոյ մը պէս էր աւազոյ ովկիանոսին վրայ, այդ անգործ բլուրը բանի մը չէր ծառայեր։ Ասիկա ոչ Աստուած և ոչ դիւցազն կ'ըլլայ, ըսաւ Փարաւոնի մը ճարտարապետը, այլ սփինքս։ Եզիպտացիք մեծ պատիւ կ'ընծայէին սփինքսի, վասն զի յառաջ քան զյայտնութիւն Աւետարանի՝ աշխարհս և ստեղծագործութիւնը կը պահէին իրենց գաղտնեաց բանալին, և իմաստունք կը սպասէին ճշմարտութեան յանսպառ բնութենէ, բայց և

նա չէր պատասխաներ : Իսկ Եգիպտացիք կը մխիթարուէին ընդհանուր լռութեամբ , բազմապատկելով սփինքաց անխօս պատկերներն : Թէթի մեծ տաճարին մէջ մտնելու համար , պէտք էր որ անցնէին նախ երկայն սրահէ՝ մեղմադձոտ սփինքաց մէջէն : Հրէշից այն կրկին կարգերն կարծես թէ կ'ըսէին հաւատացելոց հետևողաց Ոսիրիսի . « Գնացէք տաճարը սոթօքուռ , բայց բուն պիտի չխմանաք : Եթէ աշխարհակալք յարգէին զԵգիպտոս 'ի գործըս իւր , բոլոր լիբէական լերանց շրջթաներն մէյմէկ սփինքս կ'ըլլային :

Մեծ սփինքսին Եգիպտացւոց պատճառած խելքէ մտքէ վեր աշխատութեան գաղափար մը տալու համար , պատմեմք հոս համառօտիւ այն խորհրդական յիշատակարանին երկու աչքերը քանդակելու համար կարգեալ երկու արհեստաւորաց կեանքը : Աջ աչքին արհեստաւորը եգիպտական ճարտարաց մէջ առաջին տեղին ունէր , և ընտիր էր քան զբնաւս իրեն ճշգրտութեան համար , և ոչ ոք կարող էր իրեն նման աչք չինել . և սակայն ինքը աղքատ էր և երբեմն պակասէր նմոյ կերակուր : Քսան շաբաթ նոյն աչքին վրայ աշխատելէն ետքը՝ տեսնելով որ աւելցուցին իր վճարքը , համարձակեցաւ խնդրել յամուսնութիւն զօրիորդն Սափիրայ : Աղջկան ծնողքը տեղեկութիւն հարցնելով այս քանդակագործին վրայ , ամենայն տեղեկութիւնք 'ի նպատի իրեն եղան : Կ'ըսուէր որ նոյն ատեն ակնաքանդակ արհեստաւորը շաբաթը հնգետասան սոխ կը վաստրկէր , բաց աստի բազմութիւն մը ընդեղէն աստուածոց . վասն զի իսիսի և Ոսիրիսի կրօնքը իրեն չափէ դուրս բազմաստուածութեամբը , աստուածացուցած էր ընդեղէններն իսկ : Սափիրայի ծնողքը իմանալով իրենց դուստրը ուզող անձին բարձրաստիճան վիճակը , տուին օրիորդը . և այս բանս 'ի գովութիւն առին բոլոր մերձաւորք և կ'ըսէին . Սափիրա բարեբախտ ամուսնութիւն մը կ'ընէ , կը հարսնանայ պա-

տանի արհեստաւորի մը , որուն յանձնուած է սփինքսին աջ աչքին շինութիւնը : Պիտի գտնայ աշխատութիւն բոլոր կենացը մէջ , շարունակ վճարքը ամիսը հնգետասան սոխ պիտի աւելնայ , երկուքն ալ երջանիկ կեանք պիտի ունենան , և ոչ ոք պիտի նախանձի իրենց բախտին՝ բաց 'ի ձախ աչքին վրայ աշխատող արհեստաւորէն :

Ահա այսպիսի բաներ կը խօսէին Սափիրայի՝ աջ աչքին արհեստաւորին հետ ըրած ամուսնութեանը վրայ : Պատանի արհեստաւորը սփինքսին աչքին վրայ աշխատելու համար գետնին մակերևութէն հարիւր մեղր բարձրութեամբ կը կենար , և քառասուն փայտեայ սիւնք 'ի վեր կը բռնէին զինքը :

Արհեստաւորը դրաւ իր ամուսինը այն օդային պալատան մէջ , և ինք զինքը բոլորովին իր գործոյն տուաւ : Փարաւոն որ թէպէտ բռնաւոր բայց բարի անձ մ'էր , երբեմն երբեմն այցելութեան կու գար այս արհեստաւորին , կը քննէր ըրած աշխատութիւններն , կը խրախուսէր զինքը , և ամեն անգամ մեկնելու ատեն մէյմէկ ընծայ կը թողուր՝ Սափիրային . ինչպէս , սխտոր , նարնջի ջուր և ուրիշ ընդեղէններ , որք հաճոյականք էին նոյն ժամանակի կանանց : Ի՞նչ կը պակսէր արհեստաւորին . Եւ ոչինչ : Ունէր ամեն բան ինչ որ Եգիպտացի արհեստաւոր մը կրնար փափաքիլ . բարի ընկեր , տուն , սոխի եկամուտ տէրութեան գանձէն և Փարաւոնի համարումը : Բայց աւանդ . Չարութեան աստուածը գրգռեց միւս արհեստաւորը . և այս չար մարդը շատ մը ինքնահնար պատճառներ գտնելով կը խռովէր պատանի արհեստաւորին գործը : Մասնաւորապէս Նեղոսի ողողման ատեն ամեն գիշեր նաւակ կը մտնէր և աջ աչքին կողմերը կ'երթար և խառնաձայն աղաղակներ կը հանէր : Պատանի արհեստաւորը որ երկչոտ ու ազնուական բնաւորութիւն մ'ունէր , համբերեց երկար ատեն այս նեղութեանց , բայց բարեբախտաբար կտրիճ որդի մ'ունենալով , ասիկա պատժեց ձախ

աչքին նախանձուտ արհեստաւորը, յետ քսան ամաց անպատիժ յանցանաց: Պատանի արհեստաւորին որդին, գիշերատեն քաջութեամբ ինք զինքը նեղոս գետին մէջ ձգելով, մահացու կերպով հարուածեց խռովարարը և սպաննելով գաղտուկ թաղեց: Երկրորդ օրը ֆարաւոն իմանալով անոր մահը՝ աջ աչքին արհեստաւորին որդին յաջորդ անուանեց մեռնողին տեղ՝ մեծամեծ պարգևներով: Դարձաւ նորէն երջանկութիւնը և խաղաղութիւնը սփինքսին երկու աչաց հորիզոնին վրայ, և անկէ վերջը ոչ մի ինչ կրցաւ խռովել աջ աչաց արհեստաւորին անդորրութիւնը:

Երջանիկ արհեստաւորը, կը կարծէին թէ յաւիտենականութեան համար կ'աշխատին, և կը մեռնէին այն մխիթարական յուսով՝ թէ իրենց գործըն պիտի հասնի անմիտաս 'ի զարմացումն ապագայ ժամանակաց: Եւ ոչ մտքերնէն կրնար անցնիլ թէ հանդերձելոյն մէջ յիմար աշխարհակալներէն մին, Կամբիւսէս մը, Եգիպտոսի տիրելէն և ամեն բան կողոպտելէն ետքը, պիտի ժողովէ բանակը սփինքաց առջին և հրամայէ խանգարել անոնց աչքն, որոց վրայ այնչափ աշխատանք եղած էին:

ՊՈՍՊԵԱՏԻ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ՆՈՐ ՄԱՀՃԱԿԱԼ

Անցեալ տարւոյն Պոմպէայի պեղմունքէն հանուած զանազան իրաց մէջ շատ նշանաւոր է պղնձէ մահճակալ մը, որուն շքեղութենէն ու զարդերէն յայտնի է թէ մեծատուն պատրիկի մը պալատան կազմածներէն եղած ըլլայ: Թանգարանին բազմազգի կահուց մէջ առաջին կարգի անմիտաս պահուածներէն մէկն է այս մահճակալս: Զարմանալի է վրան գտնուած զարդուց պայծառ դրոշմն՝ որ գրեթէ երկու հազար տարի ետքը Պոմպէայի արուեստական ճարտարութեան և ընտիր ճաշակին ապացոյց է:

ՀԱԼԷՊ

Գեղեցիկն Հալէպ «Արեւելից Հռոնոսն», կը տարածուի ընդ մէջ գեղածիւծաղ դալարութեան և ծառոց. և ունի բնական դրից այնպիսի գեղեցիկ յատկութիւն, որ չի կրնար 'ի բաղդատութիւն գալ եւրոպական քաղաքաց հետ: Անդ ուր կը բարձրանայ այսօր Հալէպ, կ'արածուէին երբեմն Հրէից հօրը Աբրահամու խաչինքը: Անդ աւելի ետքը յաղթեց Դաւիթ Ադրաազարու Սուբայ թագաւորին զօրացը, և Քսենոփոն իր տասն հազար Յոյն դիւցազուններովն անցաւ զՇալիւս գետ ձկնաւէտ, և անկէց դարձեալ անցաւ Մեծն Ալեքսանդր երբ կը հալածէր զԴարեհ կողոման:

Հնագէտք կը համարին որ այս քաղքին Հալէպ անունն յառաջ եկած ըլլայ քարանց այն զանազան գոյներէն որովք շինուած են տուներն: Բայց տեղաբնակ ժողովուրդը ուրիշ կարծիք և աւանդութիւն մ'ունի, զոր և ապացուցանէ այսպիսի պատմութեամբ:

Երբ մեր առաջին հայրը, կ'ըսէ, Աբրահամ, կը ճանապարհորդէր Քանանու մէջ, կեցաւ քիչ մ'ատեն 'ի Հալէպ, և կանգնեց իր վրանը բլրան մը վրայ՝ ուր կայ հիմա բերդ՝ երբեմն զօրաւոր 'ի պաշտպանութիւն քաղաքին: Նահապետն ունէր հետը այնպիսի գեղեցիկ խայտաբղէտ կով՝ որուն նմանը մինչև ցայնժամ չէր տեսնուած: Անոր համար մեծ բազմութիւն մարդկան մաղցի կ'ելլային բլրան վրայ պարարելու իրենց աչքը, տեսնելով զկովը և խմելով կաթէն: Իսկ գնացողները կը հարցնէին դարձողներուն. «Նահապետը կ'ըսէր իր խայտաբղէտ գոյնզգոյն կովը»: Եւ որովհետեւ արաբական լեզուաւ հալէպը կը նշանակէ կթեց, ուրեմն ասկէց կը հետեցնեն որ քաղքին Հալէպ անունն այս դէպքէն յառաջ եկած ըլլայ:

Պէտք չէ շփոթել զՀալէպ Էպրի Հալէպին հետ, որ ուրիշ քաղաք է, և կ'իյնայ վեց փարսախ հեռու անապատին